ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

-- ------- 2020 թվականի №...Ա
քաղ. Երևան

## «ԷԼԵՆ ՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը և հաշվի առնելով, որ «ԷԼԵՆ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության գործողության ժամկետը սահմանված է եղել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 8-ը, սակայն վերջինս երկարաձգելու հայտ չի ներկայացրել՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել «ԷԼԵՆ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2020 թվականի դեկտեմբերի 9-ը հաշվարկված 305 264 (երեք հարյուր հինգ հազար երկու հարյուր վաթսունչորս) դրամ պարտքը, որից 237 500 (երկու հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 67 764 (վաթսունյոթ հազար յոթ հարյուր վաթսունչորս) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ «ԷԼԵՆ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իրավասու է.

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԷԼԵՆ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2020թ.